

ՆԱԽԱՐԱՐ ՄԵՐԱՏ՝

ՀՈՒՓՈՒՄԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԵՉ

Կրթության նախարար Ապտեյ Ռահիմ Մրրատ երեկ այցելեց Անարատ Յղուրթեանի հայ քոլեջը Սրբոց Հոգևորականաց Բարձրագոյն վարժարան, ուր ներկայ գտնուեցաւ Լիբանանի անկախութեան 59րդ տարեդարձին առիթով կազմակերպուած աշակերտական տօնակատարութեան:



Չախէն աջ՝ նախարար Մրրատ, քոյր Թեոփաստէ եւ Հայաստանի դեսպան՝ Ա. Յովհաննիսեան

Նախարար Մրրատ ընդունուեցաւ վարժարանի տնօրէնուհի Պոյր Թեոփաստէ Մարի Պէտրոսեանի, պատասխանատու քրոյրերուն, հայր Վարդանի եւս:

Աշգարեանի, Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանի, հայ երեսփոխաններուն եւ վարժարանի ուսուցչական կազմին ու ծնողական վարչութեան կողմէ:

Կրթութեան նախարարը դասարաններ այցելեց եւ խօսակցութիւն ունեցաւ աշակերտներուն հետ: Ապա վարժարանի արահին մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական աշակերտական ձեռնարկ մը:

Աշակերտութեան խօսքը փոխանցեց Համբիկ Գուրի, որ նշեց, թէ որեւէ երկիր պէտք է ունենայ անկախութիւն, գերիշխանութիւն եւ ազատու-

թիւն, եւ եթէ կորսնցնէ անունը՝ մէկը, կորսնցնուցած կ'ըլլայ նաեւ միւսները:

Տնօրէնուհի Պոյրը իր խօսքին մէջ նկատել տուաւ, որ Լիբանանի հայրենիքը գրկաբաց ընդունեց եղեռնէն ճողոպոտ հայութեան քեկորները: Տնօրէնուհի Պոյրը անդրադարձաւ անկախութեան խորհուրդին եւ վեր առաւ Լիբանանի հանդէպ հատարման իր անհրաժեշտութիւնը:

Սիրոյ անհրաժեշտութիւնը:

Չեռնարկին եզրափակիչ խօսքը արտասանեց նախարար Մրրատ, որ թուեց այն բոլոր իրագործումները, որոնք արձանագրուեցան Լիբանանի մէջ՝ լիբանանցիները մղելով լաւատեսութեան: Այն աշակերտներուն թելադրեց սիրել Լիբանանը եւ ստանձնել հայրենիքին նկատմամբ պատասխանատուութիւնը:

ԲՐԻՏԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ...

Շարունակուած Ա. Էջէն

կան ինքնակառավարման մարմիններու, նախագահական եւ Ազգային ժողովի ընտրութիւններուն վերաբերող հարցեր: Հ. Յ. Գ. ի ներկայացուցիչները շեշտեցին, թէ կուսակցութեան համար կենսական է, որ յառաջիկայ ընտրութիւնները ըլլան ազատ, արդար եւ թափանցիկ, որպէսզի հարցականի տակ չառնուի ընտրութիւններուն օրինակաւորութիւնը, եւ ժողովուրդին մօտ վերականգնի երկրին եւ անոր

ապագային կերտման հանդէպ հաւատքը: Այս նպատակով Հ. Յ. Գ. ձեռնարկած է Հայաստանի մէջ գործող 18 կուսակցութիւններու հետ երկխօսութեան:

Հ. Յ. Գ. ի ներկայացուցիչները շնորհակալութիւն յայտնեցին դեսպան ձեռնարկէն: Հայաստանի մէջ իր պաշտօնավարութեան ընթացքին կուսակցութեան հետ ստեղծուած սերտ յարաբերութիւններուն համար: Հայաստանի մէջ Թիմոթի ձեռնարկը պաշտօնավարութիւնը կ'աւարտի 1 Գ. Էջէններէն:

ԾԱԽՈՒ ԿԱՍ ՎԱՐՁՈՒ

ՅԱՆՈՒ ԿԱՍ ՎԱՐՁՈՒ

● Անթիլիասի շրջան գեղատեղի վայր, 4րդ յարկ, 3 քմաքանոնակ, հիւրասենեակ, ձաշատեղակ, մաքուր վիճակի մէջ: Հեռ. 03-608764:

ԿՈՒՉՈՒԻ

● Ծրջուն վաճառող մը, համալսարանաւարտ, ինքնաշարժ ունենալը պայման, 20էն 35 տարեկան: Դիմել՝ հեռ. 01-242898 եւ 03-821616 քիւրուս:

ԾԱԽՈՒ ԿԱՍ ՎԱՐՁՈՒ

ՅԱՆՈՒ ԿԱՍ ՎԱՐՁՈՒ

● Չալքայի մէջ: Հեռ. 04-412204:

ԾԱԽՈՒ ՀՈՂ

● Մըզիտ, «Աղբալեան Հ.Ս.Ը.Մ.» կողմին ձիւղ դիմացի երկու հողերը: Դիմել հեռ. 04 - 522992:

ԿՈՒՉՈՒԻ

● Կարպետ ոսկերիչ (սեւտելք): Հեռ. 03 - 882947:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

● Նախակրթարանի աշակերտներու բոլոր միութեան համար: Հեռ. 03-570046:

ԿՈՒՉՈՒԻ

● Ոսկերչական մոմի վրայ աշխատող գործաւոր մը: Հեռ. 01 - 900801:

ԿՈՒՉՈՒԻ

● Առեւտրով կը զբաղի՞ս, համալսարանաւարտ ես, անգլերէն գիտե՞ս, ինքնաշարժ ունի՞ս, տարիքդ 25էն վեր է, կրնաս դիմել: Ֆաքս: C. V. 04 - 713816 կամ e-mail: recruitment@barternet - Lb - com.

ՀԻՐԱԿԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 59ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ...

Շարունակուած Ա. Էջէն



Նախարար Արիտի իր խօսքի պահուն

հայրենիքի եւ Լիբանանի գոյութեան»: Ս. Կիրակոսեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Մենք միակ չենք Լիբանանի մէջ. եթէ միակ ըլլայի՞սք, այս հայրենիքը գոյութիւն չէր ունենար: Մեր հետ Լիբանանի մէջ գոյութիւն եւ ձակառակի կը կիսեն եղբայրներ. եւ եթէ կ'ուզենք, որ միասին մնանք, անհրաժեշտ է երկխօսութիւնը եւ Լիբանանի անկախութեան հիմքերուն պօրացումը»:

Բացման խօսքին յաջորդեց գեղարուեստական յայտագիր: Ազգային վարժարաններու աշակերտներ արաբերէն երգով, ասմունքով եւ նուագով հանդէս եկան: Առաջին հերթին խումբ մը աշակերտներ ներկայացուցին Չէքի Նասիֆի «Պայտի Լուպանի Այ Ամէր» խմբերգը՝ դաշնակի ընկերակցութեամբ Թամար Թորիկեանի, այնուհետեւ Բեկի Իսա եւ Գալիանէ Թաշճեան արտասանեցին բանաստեղծ Էլիա Ապու Մատիի «Լուպանի» բանաստեղծութիւնը, Տաթևիկ Արիտեան եւ Թամար Իսկեան ներկայացուցին սրինգի եւ դաշնակի կուսակցութեամբ մը, Արայ Գոճայեան ասմունքեց Էլիաս Ապու Շապիի «Լուպանի» բանաստեղծութիւնը, իսկ գեղարուեստական յայտագրի աւարտին Ալիա Տեմիրճեան երգեց Չէքի Նասիֆի «Պիպպաք եւ Լուպանի» երգը՝ օրկի ընկերակցութեամբ Սարգիս Աղաօշեանի:

Խօսք առաւ տեղեկատուութեան նախարար Ապտեյ Արիտի, որ շնորհակալութիւն յայտնեց առաջնորդ արքայանիւնի եւ Ազգային իշխանութիւններուն, որոնք կազմակերպեցին Լիբանանի անկախութեան տարեդարձին նուիրուած այն հանդիսութիւնը եւ իրեն առիթ ընձեռեցին իր խօսքը փոխանցելու: Առիթ մը՝ դարձեալ հանդիպելու բարեկամներու հետ, որոնք «կը յաճախեն հայրենասիրութեան, ազգային արժանապատուութեան եւ Կոնստանտինոպոլիսի դպրոցը, եւ որոնք բոլորն ալ կը պատկանին միջավայրի մը, որ միշտ եղած է Լիբանանի միջավայրը՝ միացեալ Լիբանանի, Լիբանանի հայրենիքի, Լիբանանի պատմութեան եւ բոլոր լիբանանցիներուն երկիրը եղող լիբանանեան միջավայրին»:

Նախարար Արիտի վեր առաւ անկախութեան



Առաջնորդ Սրբազանը կը կատարէ փակման խօսքը

արժէքները՝ շեշտը դնելով այն կէտին վրայ, որ Լիբանանի անկախութեան երեւոյթը չի սահմանափակուիր միայն դեկլարութեան մը բանադրութեամբ եւ անոր պատ արձակման իբրեւ հետեանք անկախութեան հռչակմամբ, այլ ունի խորք: Ան նշեց, որ 11 Սեպտեմբերի դէպքերէն ետք կայ արժէքներու յստակ փոփոխութիւն համաշխարհային գեոսի վրայ, եւ Միացեալ Նահանգներու միաբերեալ քաղաքականութիւնը լուրջ հարցականի տակ կ'առնէ երկիրներու անկախութեան հասկացողութիւնը:

Այս ծիրին մէջ նախարար Արիտի դատապարտեց կարգ մը քաղաքական ուժերու կեցուածքները, որոնք անկախութեան, պատմութեան եւ գերիշխանութեան կարգաթուրումներուն քողին տակ կը փորձեն խաթարել անկախութեան իրական հասկացողութիւնը: Տեղեկատուութեան նախարարը կարեւոր նկատեց Լիբանանը բաղկացող բոլոր տարրերուն միջեւ ազգային միասնականութեան եւ համակեցութեան ամրապնդումը եւ այս նպատակին իրագործման համար ան շեշտեց Լիբանանի պատմութեան միացեալ դասագիրքի մը որդեգրման անհրաժեշտութիւնը:

Հանդիսութեան փակման խօսքը արտասանեց Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան, որ շնորհաւորեց նախագահ Կոր. Էմիլ Լահուրը անկախութեան տօնին առիթով եւ անոր մաղթեց յարատեւ աշխատանք, որպէսզի Լիբանան մնայ ազգային միասնականութեան եւ համակեցութեան հայրենիքը:

Առաջնորդ արքայանիւնը անդրադառնալով Լիբանանի մէջ հայութեան դերակատարութեան յայտնեց, որ լիբանանահայերը սկիզբէն ի վեր Լիբանանի մէջ գիտցան ապաստան, եղբայրութեան եւ մարդկայնականութեան իմաստները, երկրի տարածքին ունեցան իրենց հաստատութիւնները, ջանացին սերտ յարաբերութիւններ մշակել բոլորին հետ եւ բոլորն ալ կ'ուզեն շահի անոնց վստահութիւնը: «Այս է Լիբանանը, եւ պէտք է բոլոր լիբանանցիները աշխատին անոր գոյատեւման եւ մարդկային հարուստ անհրաժեշտութիւններով հարստացման համար: Այս միջոցով Լիբանան կը դառնայ ո'չ թէ սուսկական հայրենիք մը, այլ՝ առաքելութիւն մը», եզրակացուց Գեղամ եպ. Խաչերեան:

ԳՐԱԴՈՒԿԱԾ ՕՐ
«ԱՂԲԱԼԵԱՆ - Հ.Ս.Ը.Մ.»
 ՄԱՐԶԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԱԿԻՐ
 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2002

ԾԱԽՈՒ ԿԱՍ ՎԱՐՁՈՒ
 (Կալուածաթուղթով)

● Պուրճ Համուտի շրջանի մէջ, շատ լաւ վիճակի մէջ, մոտ 2էք, Ա. յարկ, լծան կահաւորուած, 3 քմաքանոնակ, ձաշատեղակ, 20 մետր պատըզգամ, անձնակառք ջրհոր, հեռաձայն, կառատուս: Հեռ. 01-261177, 03-233978 գիշեր եւ 01-258887:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սեղա Պալեան եւ զաւակները՝
 Լենա եւ Յարութ

Տիկին Լուսին Պալեան եւ զուտորը՝ Մայտա
 Տէր եւ տիկին Ներսէս Պալեան եւ ընտանիք
 Տէր եւ տիկին Արրահամ Պալեան եւ ընտանիք
 Տէր եւ տիկին Կարպիս Պալեան եւ ընտանիք
 Տէր եւ տիկին Արրահամ Պալեան
 Տէր եւ տիկին Գէորգ Սարգսյանեան եւ ընտանիք
 Տէր եւ տիկին Նազարէթ Սարգսյանեան եւ ընտանիք
 Տէր եւ տիկին Յարութիւն Չիլիկիերեան եւ զաւակներ
 Տիկին Մարի Նաճարեան եւ ընտանիք
 Տէր եւ տիկին Ասատուր Եագուպեան եւ զաւակներ
 եւ ճամբն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, Տոր, զաւակին, եղբոր, Տորեղբոր, քեռիին եւ հարազատին՝

ԳԵՈՐԳ ՊԱԼԵԱՆԻ
 (Ծնեալ՝ 1940ից)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 20 Նոյեմբեր 2002, առաւօտեան ժամը 9:00ին, «Հայրուն» հիւանդանոցին մէջ, սրտի կաթուածի պատճառով:

Յուզարկատուութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 21 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իրել մահապը:
 ● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ամանու, Երեւանեան շէնքեր, պուր. 4րդ յարկ, Ուրբաթ 22, Շաբաթ 23 եւ Կիրակի 24 Նոյեմբերին:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Կիրակի, 24 Նոյեմբեր 2002ին, հանգուցեալ բարեբար ՄԻՇԻՐԱՆ ԳԱՐԱԿԵՕՉԵԱՆԻ եւ իր ընտանիքին (ԶԱՊԵԼ, ԼԵՅԼԱ եւ ՀԱՌԻՐՏ), ինչպէս նաեւ Գարակեօգեան հաստատութեան նախկին տնօրէն ՆՈՒՊՐԱՆ ԴԱԽԻԹԵԱՆԻ եւ իր տիկնոջ՝ ԱՆԱԿԻՏԻ յիշատակին, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի պաշտօնակազմ հոգեհանգիստ, յընթացս Ս. պատարագի:

Արարողութեան պիտի նախագահէ եւ յաւուր պատշաճի բարոգէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին)

| | |
|---------------------|--------------|
| Սկիզբ ժամերգութեան՝ | ժամը 7:30ից |
| Ս. պատարագ՝ | ժամը 9:30ից |
| Քարոզ՝ | ժամը 10:30ից |
| Հոգեհանգիստ՝ | ժամը 11:00ից |

Սիրով կը հրաւիրուի մեր բարեպաշտ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութեան:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ
 Ս. ՆՅԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԼՕՆԻ 2003 ՏԱՐՈՒԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ

Նուիրուած խաղաղութեան թեմային

ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՈՒՍԱՆՈՂԱՅԽՈՐՀՈՒՐԴ

Թեքեան Ուսանողական Թատերախումբը կը ներկայացնէ՝ ՆԻՔԸԼԻ ԵՒ ՄԻՇԱՆԻ ԱՆՆԻ

Երաժշտական եւ պարային թատերախումբ Բեմադրութիւն՝ ԳՐԻԳՈՐ ՏԵԿԻՐՄԵՆԵԱՆ

Տեղի կ'ունենայ «Յ. Տեր Սելբոնեան» թատերաբաղնի մէջ:
 Տեղեկոյ՝ ժամը ձիւղ 4:00ին, Նոյեմբեր 23, 24, 29, 30, Դեկտեմբեր 1:
 Երեկոյ՝ ժամը ձիւղ 8:30ին, Նոյեմբեր 21, 22, 23, 24, 29 (Կալա), 30, Դեկտեմբեր 1:
 Տնօրէնը ստանալ տիպոքէ «Ճեք»-էն եւ ներկայացման օրերը կ'ընտրէ:

Sponsors: LEBANESE CANADIAN BANK and LIBBY'S

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է Հ. Յ. Գ. ԼԵՄԻ 2003Ի ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ

ԼՅ.Գ. ԼԵՄ. 30ամեակ

1973 2003

ՍԱԿ 10,000 ԼԻԲ. ՈՍԿԻ

ԿՈՉ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԱՏԵՐԵՐՈՒՆ

Ձեր գործերը վստահեցէ՛ք ՓՕԼԻԿԼՕԹ քոլէճի շրջանաւարտներուն:

Իսկ այն շրջանաւարտները, որոնք ցարդ անգործ են թող անմիջապէս դիմե՛ք՝

POLYGLOT EMPLOYMENT DEPT
 Հեռ. 01 - 251320, 03 - 299484 - Տորա:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԱՅՍՕՐ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՊԱՏԳԱՄ ՄԸ ՊԻՏԻ ՓՈԽԱՆՅԷ ԼԻԲԱՆԱՆՅԻՆԵՐՈՒՆ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ այսօր երեկոյան ժամը 8:30ին լիբանանցիներուն պիտի փոխանցէ Լիբանանի անկախութեան տօնին առիթով իր պատգամը:

Նախագահ Լահուտ երէկ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորին, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր հարցերը եւ շրջանային կարգաւորումները:

Պրորի հանդիպումէն ետք յայտնեց, որ քննարկուած է նաեւ Շաբաթ օր Ֆրանսայի մէջ գումարուելիք «Փարիզ - 2» ժողովին նախապատրաստական աշխատանքները եւ տիրող ընդհանուր մթնոլորտը: Պրորի յոյս յայտնեց, որ «Փարիզ - 2» հարկ եղած օժանդակութիւնը կրնայ ապահովել բարելաւելու համար տնտեսութիւնը:

Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ ընդհանուր դատախաչ Ատնան Ատտուը, պետութեան անվտանգութեան ընդհանուր տնօրէն Էտուար Մանսուրը, որուն հետ քննարկեց ապահովական հարցեր:

Նախագահ Լահուտ շնորհաւորական հեռագիրներ ստացաւ Մարտի Մոհամէտ Չ. Թաւադրէն, Թունուչի նախագահ Չէյնէյ Ապիտին Պըն Ալիէն, Պահրէյնի էմիր շէյխ Համատ Պըն Խա Ալ Սալիֆայէն, Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնէն, Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայէն, Յունաստանի նախագահ Բոսթանիսու Սթեֆանուպուլուսէն, Բենիոյ նախագահ Տանիէլ Արաբմէլէն, Սպանիոյ թագաւորէն, Աւստրիոյ նախագահ Թոմաս Բլէսթիլէն, Մեքսիքայի նախագահ Վենուսուէլա Ֆէրընտէսը:

Շար.ը՝ էջ 9

ԲԱՆԱԿԻ ԵՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ «ՕՐՈՒԱՆ ԵՐԱՄԱՆ»Ը

Բանակի հրամանատար Կոր. Միշէյ Սիէյման Լիբանանի անկախութեան տարեդարձին առիթով երէկ բանակին փոխանցեց իր խօսքը՝ «Օրուան հրաման»-ը, որուն մէջ դրուատեց բանակին դերակատարութիւնը՝ պետութեան եւ պետական հաստատութիւններուն պաշտպանութեան իմաստով:

«Այգային միասնականութեան ձեռք օրինակելի կեցումը շահեցաք քաղաքացիներուն վստահութիւնը եւ բարի օրինակ դարձաք՝ ցոյց տալով, որ այգային միասնականութիւնն է հիմքը ներքին դիմադրողականութեան», ըսաւ ան: Չօր. Սիէյման շեշտեց նաեւ, որ այգային կեցումը ամրապնդուեցաւ բանակին կոհորտիւններով եւ Սուրիոյ օժանդակութեամբ:

Չօր. Սիէյման ըսաւ, որ շրջանը կ'ապրի վտանգաւոր հանրային մը՝ նկատի ունենալով Իրաքի ուղղուած սպառնալիքները, պաղեստինցիներուն դէմ կատարուած իսրայիլեան վայրագ բռնարարները եւ քաղաքական լուծումներու չզոյտիւնը:

Բանակի հրամանատարը շեշտեց, որ անկախութիւնը բանակին վստահուած կտակ մըն է: Ան ըսաւ, որ անկախութեան վահանը ժողովուրդին կամքն է, որ կ'ամրապնդուի Լիբանանի ամբողջական պատարագութեամբ եւ կը գոյատևէ բանակին ջանքերով:

ՊԱՐՈՒ ԶԱՅՐԱՅԱԾ...

Շարունակուած Ա. Էջէն
Նորոգները «միշտ հանդիպում կ'ունենան Լեռնային Ղարաբաղի հայ համայնքի ղեկավարներուն հետ երբ շրջան կ'այցելեն», հետեւաբար, ֆրանսացի համանախագահը Ղուկասեանի հետ Փարիզի մէջ տեսակցած է ծանօթանալու համար շրջանի իրավիճակին:
«Էլ, Էն, Էս»-ի համաձայն, Ֆրանսայի դեսպանութեան պաշտօնատարը նշած է, թէ պաշտօնական Փարիզը կը ճանչնայ Արարիկի հողային ամբողջականութիւնը, եւ չի ճանչնար Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Լիբանանեան օրաթերթերը իրենց երէկուան թիւով գլխաւորաբար անդրադարձած են «Փարիզ - 2» ժողովին եւ անոր առնչուող արձագանգներուն, իր կինամթերքին մասին տեղեկագիրը ներկայացրելու Պաղտատի պատրաստականութեան, պաղեստինեան տագնապին վերջին իրադարձութիւններուն եւ տեղական անցողիկարձերուն:

«Անուար» նշած է, թէ «Փարիզ - 2»-ի ժողովին միլիտանտները ժողովուրդին գրպանէն պիտի առնուին: Նոր պարտքերու պահանջը յառաջիկայ երկու տարիները համեցողութեան մէջ անգրնելու կը ծառայէ: Նոր վարկեր ստանալէ ետք, իշխանութիւնը նոր կառավարութիւն մը պիտի կազմէ:

«Նահար» նշած է, թէ Փարիզի քաղաքական շրջանակներէն քաղուած տեղեկութիւններու համաձայն, «Փարիզ - 2» ժողովը պիտի որդեգրէ Լիբանանի կառավարութեան տնտեսական ծրագիրները, բայց նիւթական յատկացումները պիտի տրամադրէ տնտեսական բարեկարգումի քայլերուն համապատասխան:
«Սաֆիր»-ի համաձայն, Փարիզ ուրախ է նախագահ Պուշի եւ վարչապետ Հարիրիի հանդիպումով, իսկ Ուաշինկթըն կ'ողջունէ բարեկարգումներ կատարելու Լիբանանի ճիգերը:
«Երոպական երկիրները Կորաշարժի ենթարկելու ճիգեր ի գործ դրուած են Ֆրանսայի կողմէ՝ «Փարիզ - 2»-ի Կորակցութիւնն ապահովելու համար. Պուշի կեցածքը կարելի է նշանակալից անուանել:

«Նահար» նշած է, թէ Փարիզի քաղաքական շրջանակներէն քաղուած տեղեկութիւններու համաձայն, «Փարիզ - 2» ժողովը պիտի որդեգրէ Լիբանանի կառավարութեան տնտեսական ծրագիրները, բայց նիւթական յատկացումները պիտի տրամադրէ տնտեսական բարեկարգումի քայլերուն համապատասխան:
«Սաֆիր»-ի համաձայն, Փարիզ ուրախ է նախագահ Պուշի եւ վարչապետ Հարիրիի հանդիպումով, իսկ Ուաշինկթըն կ'ողջունէ բարեկարգումներ կատարելու Լիբանանի ճիգերը:
«Երոպական երկիրները Կորաշարժի ենթարկելու ճիգեր ի գործ դրուած են Ֆրանսայի կողմէ՝ «Փարիզ - 2»-ի Կորակցութիւնն ապահովելու համար. Պուշի կեցածքը կարելի է նշանակալից անուանել:

«Պայրաք» նշած է, թէ անկախութեան տօնին առիթով նախագահ Լահուտ իր պատգամին մէջ պիտի շեշտէ ներքին միասնականութեան վրայ եւ պիտի նշէ իշխանութեան ձեռքբերումներն ու Պէյրութի մէջ գումարուած երկու վեհաժողովները: Ըստ թերթին, նախագահը վարչապետ Հարիրիէն տեղեկացաւ, թէ Ուաշինկթընի տեսակցութիւններուն արդիւնքները դրական են:
«Սաֆիր»-ի համաձայն, ամբաստանալից անցողիկարձերը իրենց առաջին էջերով անդրադարձած են Թուլքարմի մէջ 5 պաղեստինցիներու սպանութեան. անոնց շարքին է «Աքսայի» նախապետական Փաղանգներուն մէջ անդամը: «Լիուս»-ի համաձայն, Միացեալ Նահանգներ, Բրիտանիա եւ Ֆրանսա կը դատաւարտեն իսրայիլեան բռնագրաւումները, մինչ Իսրայիլ նոր շարժեր կը գործէ Թուլքարմի մէջ:
«Քիֆաի Արապի»-ի համաձայն, ամբաստանալից անցողիկարձերը իրենց առաջին էջերով անդրադարձած են Թուլքարմի մէջ 5 պաղեստինցիներու սպանութեան. անոնց շարքին է «Աքսայի» նախապետական Փաղանգներուն մէջ անդամը: «Լիուս»-ի համաձայն, Միացեալ Նահանգներ, Բրիտանիա եւ Ֆրանսա կը դատաւարտեն իսրայիլեան բռնագրաւումները, մինչ Իսրայիլ նոր շարժեր կը գործէ Թուլքարմի մէջ:
«Քիֆաի Արապի»-ի համաձայն, ամբաստանալից անցողիկարձերը իրենց առաջին էջերով անդրադարձած են Թուլքարմի մէջ 5 պաղեստինցիներու սպանութեան. անոնց շարքին է «Աքսայի» նախապետական Փաղանգներուն մէջ անդամը: «Լիուս»-ի համաձայն, Միացեալ Նահանգներ, Բրիտանիա եւ Ֆրանսա կը դատաւարտեն իսրայիլեան բռնագրաւումները, մինչ Իսրայիլ նոր շարժեր կը գործէ Թուլքարմի մէջ:

«Քիֆաի Արապի»-ի համաձայն, ամբաստանալից անցողիկարձերը իրենց առաջին էջերով անդրադարձած են Թուլքարմի մէջ 5 պաղեստինցիներու սպանութեան. անոնց շարքին է «Աքսայի» նախապետական Փաղանգներուն մէջ անդամը: «Լիուս»-ի համաձայն, Միացեալ Նահանգներ, Բրիտանիա եւ Ֆրանսա կը դատաւարտեն իսրայիլեան բռնագրաւումները, մինչ Իսրայիլ նոր շարժեր կը գործէ Թուլքարմի մէջ:

ՎԵՐՁԻՆ ԺԱՄԿԷՏ՝ ՀԱՅ ԳԻՐՔԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՆ
Շայ Գիրքի 24րդ գեղջ - վաճառք ցուցահանդէսը կը շարունակուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ, ամեն օր առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 7:00:
Վերջին ժամկետ ցուցահանդէսի՝ Կիրակի, 24 Նոյեմբեր 2002, մինչեւ երեկոյեան ժամը 8:00:
ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆ
Ցուցահանդէսը բաց պիտի մնայ Ուրբաթ, 22 Նոյեմբեր 2002ին:

LOUJI «ԿԱՐՍ» ՄԱՍՆԱՃԻՂԻ - ԷՆԵՔԻԷ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ
LOUJI «Կարս» մասնաձիղը (Էնեքիէ) իր «Միլիոն Տեր Մելքոնեան» դարձնաւ համար կարիք ունի հիւանդապահուիլի մը:
Շտաբըրողներն կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 01-586294, 01-449160, 03-564409 եւ 03-977012 թիւերուն, կ'տօր ետք ժամը 4:00էն ետք:

Panasonic
45 YEARS National Panasonic Technics
DVD-RA61 DVD-AV Player 5.1-ch, MP3, JAPAN \$6,500
Worth: \$465
42" PLASMA [tau] \$9,500
SC-HT75 One Package Home Theater with 5 DVD, MP3 Worth: \$495
RX-M70 Radio Cassette 18W Worth: \$40
TC-21S85R 21" \$236
TC-21KS30R 21" \$242
SC-AK600 3200W, 5 CD, Dolby Digital \$300
RF-NA030 AM/FM Ultra Slim Pocket Radio Worth: \$38
NV-DS30 Digital Video Camera 2.5" D Lux \$645
RQ-CW05 Headphone Stereo Worth: \$25
TC-14KM30R 14" \$140
RE-WS10 Worldspace Receiver Worth: \$180
TX-51P50X 51" 100Hz, PIP, Text, JAPAN \$2,950
TX-43P250X 43" 100Hz, Text, RGB \$1,410
RE-WS10 Worldspace Receiver Worth: \$180
TX-34P150X 34" 100Hz, Text, RGB \$1,410
SC-AK600 Mini Compo 3200W, 5 CD Dolby Digital Worth: \$300
Bring in your National Panasonic Technics: TV, VCR, Movie Camera, Mini Compo, DVD, Portable Audio or Kitchen Appliance to our Service Center and get up to 45% discount on parts and labor.
Valid from November 11 to 21, 2002, on products imported by Tutunjan Corp. S.A. Subject to availability of parts.
These offers are valid from November 1, 2002 to January 31, 2003
only on products guaranteed by TUTUNJIAN CORP. S.A.
04/712129-130, 711967, 03/243203
Fax: 04/712177, E-mail: TTC@cyberia.net.lb
Add 10% VAT on above prices
Up To 45% DISCOUNT

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ 3ԱԶՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:



ԼԻՔԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 590Դ ՏԱՐԵԴԱՐԱԶ

ԼԻՔԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԵՒ ՄՇԱԿՈՅԹՆԵՐՈՒ ԾԱՂԿԵՓՈՒՆՋ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Լիբանանի անկախության յիսնամյակին առիթով գրուած «Ազգակ» խմբագրակա- նը (1993) այսօր ինը տարի ետք կը մնայ այժմեական թե՛ համալիբանանեան հասկա- ցողութեամբ իր մատնանշումներով, թե՛ այս երկրին բաղկացուցիչ մէկ անբաժան մասնի- կը կազմող հայ համայնքի դերակատարու- թեան եւ իրաւունքներուն իմաստով: Ըտե- ւաբար կը վերահրատարակենք զայն իր շա- հեկանութեան, բայց մանաւանդ Լիբանանի նկատմամբ մեր անփոփոխ ուղեգիծը մեր ընթերցողներուն անգամ մը եւս յիշեցնելու համար: Փաստօրէն այսօրուան մեր առա- ջին էջով տրուած խմբագրականին եւ 1993ի այս խմբագրականին միջեւ կան յստակ հա- սարակ յայտարարներ, ինչ որ բնականա- բար կ'ապացուցէ կազմակերպական թէ հա- մայնքային առումով մեր ուղեգիծի անշեղ շարունակականութիւնը: Հոն կը փոխուին միայն թիւեր ու թուանշաններ, սակայն ուղ- դութիւնն ու գաղափարները կը մնան նոյ- նը:

50 տարի առաջ, Բ. Աշխարհամարտի տար օրերուն, Միջին Արեւելքի Միջերկրականեան այս ափին վրայ, անկախ հանրապետութիւն հռչակուեցաւ փոքրիկ Լիբանանը, որուն վի- նակուած էր իւրաքանչեւ նակատագիր մը:

Բազմաթիւ համայնքներու եւ տարբեր մշա- կոյրներու պատկանող այս երկրին զաւակնե- րը ի մի խմբուեցան, վերջ տալու համար Օս- մանեան լուծը հոգատարութեամբ մը փոխա- րինած Ֆրանսայի ներկայացուցիչ իշխանու- թեան եւ հիմը դրին իր բոլոր զաւակներուն հաւասար հայրենիք Լիբանանի անկախ պե- տութեան: Անկախութեան սերունդը, ազա- տագրումի պայքարի կողքին, միջեւ նաեւ ոչ - նուազ կարեւոր այլ պայքար մը՝ արտաքին հո- սանքներէ ձերբագտելու եւ իբրանեան հո- սանք մը, այսինքն՝ Լիբանան - հայրենիքին շահերը ամէն բանէ վեր դասելու հոսանք մը ստեղծելու պայքարը, որ պիտի ըլլար գրաւա- կանը իբրանեան գեղեցիկ եւ իւրաքանչեւ իսնակարին գոյատեւման եւ զարգացման:


Մայրիակիր դրօշը եւ անկախ հանրապետու- թեան Սահմանադրութիւնը կերտող սերունդը այս երկրի զաւակներուն կտակեց նաեւ այլ անկող մը՝ Ազգային Ուխտը, որ խորքին մէջ մարմնաւորումն էր օրուան իրողական պայ- մաններուն եւ երկրին համայնքներուն պար- տաւորութեան ու իրաւունքներուն միջեւ հա- ւասարակշռութիւն խոստացող երաշխիք մը: Եւ այդ ուխտին ոգին, այսինքն՝ համայնքնե- րու համերաշխ գոյակցութեան սկզբունքը կտրեց 50 տարիներու պազ եւ տար փուլերը եւ այսօր, իբրեւ վերանորոգուած աւանդ կը փո- խանցուի հանրապետութեան արծաթեայ յո- բելեանը տօնող սերունդին:

Հեզասահ ընթացք չունեցաւ Լիբանանի հանրապետութեան 50 տարիներու կեանքը: Պատերազմի թոն ու բռնի մէջ ծնունդ առած անկախ հանրապետութիւնը, աշխարհագրա- կան իր դիրքին բերումով, ինկած էր աշխար- հի յետ-պատերազմեան ամէնէն տար գոտիներ- րէն մէկուն մէջ եւ այդ պատճառով ալ, ոչ միայն բաժնեկից եղաւ իր արար նակատարա- կիցներուն ապրած ծանր ցնցումներուն՝ Պա- դեստինի, Սուէզի, 1967 եւ 1973ի պատերազմ- ներուն հետեւանքներուն, այլ անոնցմէ ետք, ամբողջ 15 տարի գրեթէ առանձին կրեց ու այսօր ալ կը շարունակէ կրել արար - իտա- յէլեան տագնապին ամէնէն ծանր ու ողբեր- գական հետեւանքները, աւելի բան նակատա- գրակից դառնալով իր հողերուն վրայ հիւրըն- կալուած հայրենագուրկ պաղեստինցիներուն վիճակուած դաժան նակատագիրին: Ու ժերու րախումի խաչմերուկը դարձած Լիբանան սուղ վճարեց «արարական աշխարհի միակ արի- նոտ վերքը» մնալու գինը, որ իր 50 տարինե- րու կեանքին մօտաւորապէս մէկ - երրորդը վերածեց ֆիզիքական ու բարոյական մաշու- մի ահաւոր փուլի մը:

Այսօր, երբ Լիբանան կը տօնէ իր անկախու- թեան 50րդ տարեդարձը, պատերազմական տարիներու՝ «իր հողին վրայ այլոց պատե- րագմներ»ու փուլը արդէն պատմութեան ան- ցած է երեք տարիէ ի վեր, բացի հարաւին վի- նակուած դաժան նակատագիրէն: Անկախու- թեան սերունդին կտակած աւանդը վերանո- րոգուած է եւ համայնքներու համակեցուրտեան հայրենիք Լիբանանի դիմագիծը սկսած է վե- րահաստատուիլ բանի եւ գործով: Թաւֆի մէջ, այս երկրին զաւակները վերանորոգած են հին ուխտը եւ յանձն առած՝ աւելի եւս զար- գացնելու գայն, կենսագործելու համար ժա- մանակակից պայմաններուն հարագատ ար- տաշարտութիւնը եղող, այսինքն՝ իր բոլոր զա- ւակներուն համահաւասար պարտականու- թիւներ պարտադրող ու իրաւունքներ շնոր-

Շար.ը՝ էջ 7

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՐԱՇԽԻՔԸ՝ ԿԱՅՈՒՆ ԲԱՆԱԿԸ



Լիբանանի կայունու- թիւնն ու Լիբանանեան բանակի լաւ կազմաւո- ռումը լաւագոյնս կ'ապացուցեն կազմա- կերպութեան թիւերը:

Բանակը այն սիւնն է, որ իր ուսերուն առած է երկրին անկախութեան ապահովումն ու պաշ- պանումը, սահմաններու պաշտպանութիւնը եւ կը հանդիսանայ քաղաքա- ցիներուն միասնականու- թեան եւ յոյսի օրրանը:

Լիբանանի անկախու- թեան հռչակումէն քանի մը օր ետք, 27 Նոյեմբեր 1943ին, Լիբանանեան դրօշակը ծածանեցաւ Մերժալուսի գորանոցին վրայ: Անկախ դարձաւ այն հիմը, որուն վրայ կերտուեցաւ եւ ամ- րապնդուեցաւ Լիբանա- նի անկախութիւնն ու հզօրութիւնը:

Սակայն Լիբանանի մէջ բանակին կազմու- թիւնը ունի հին ակունք- ներ:

Լիբանանեան բանա- կին պատմութիւնը կը սկսի Ա. Աշխարհամար- տի օրերուն: 15 Նոյեմբեր 1916ին Ֆրանսական բա- նակին շարքերուն մէջ կը ստեղծուի «Արեւելեան Լեզգոն»ը, որուն կ'ան- դամակցին Լիբանանցի հարիւրաւոր կամաւոր- ներ: Այս գումարտակը հետզհետէ կ'ընդարձակ- ւի եւ կը ստանայ Լիբա- նանեան իւրաքանչեւ զորք: Այս լեզգոնին մէջ աչքառու կը դառնան կարող մարտիկ, որոնք Լիբանանեան կանոնա- տար գործառնի մը հիմ- նական տարրերը կը կազ- մեն: 26 Յունուար 1926ին կը հիմնուի «Լիբանան- եան արձակագէշներու ջոկատ»ը, որ կը դառնար ապագայ Լիբանանեան բանակին կորիզը:

Լիբանանցի 40 սպա- ներ, մերժելով ենթարկը- լիլ որեւէ օտար կառա- վարութեան, 26 Յունիս 1941ին ժողով մը կը գու-

մարեն Ջուբ Մըքայէլի մէջ եւ իրենց հայրենիքին հաւատարիմ մնալու պատրաստակամու- թեամբ կը ստորագրեն պատմական փաստա- թուղթ մը, ուր անոնք կ'երզնուեն հաւատարիմ մնալ Լիբանանի կառա- վարութեան:

Լիբանանի անկախու- թեան հռչակումէն 7 ամիս առաջ Լիբանանեան գինուորական տարրեր գորարածիններ կը հա- մախմբուին մէկ մեծ միա- տրի մէջ՝ Յրդ գունդ, գնդապետ Յուսապ Եհա- պի հրամանատարու- թեամբ: Անկախութեան հռչակումէն ետք իբրա- նանցի արձակագէշներու Յրդ ջոկատը կը զրուի անկախ Լիբանանի կա- ռավարութեան տրա- մադրութեան տակ՝ ապահովութեան հսկելու նպատակով: Չինեալ ու- ժերուն մեծամասնու-

Շար.ը՝ էջ 7



ՄԱՅՐԻ ԾԱՌԸ՝ ԸՄՊԵՋԱԿԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԳԱՆԻՇԸ

ՆԱԽԱԳԱՀ ՇԵՀԱՊԻ ԿՈՉԸ՝ ԼԻՔԱՆԱՆՅԻՆԵՐՈՒՆ



Լիբանանի անկախութեան 15ամեակին առիթով (1958), Մախազահ Ֆուատ Շե- հապի կոչը՝ լիբանանցիներուն. «Ազգ մը, որ իրագործեց 1943ի հրաշալի անկախու- թիւնը եւ 1958ի հրաշագործ վերականգ- նումը, այլեւս չի կրնար հեռանալ ապահո- վութեան եւ բարգաւաճման ուղիէն»:

Ստորեւ՝ շահեկան կոչին ամբողջութիւնը.

Լիբանանցիներ, Տարեդարձը, որ այսօր կը տօնենք, միա- ժամանակ տարեդարձն է ծնունդի մը եւ յաղ- րանակի մը:

Սերունդէ սերունդ, Լիբանան միշտ պայ- քարած է ի խնդիր մարդավայել եւ ազատ կեանքի մը եւ յարատեւ յառաջդիմութեան: Ապրած է մոռալ եւ պայծառ օրեր: Ծանցած է երբեմն ապրելու քաղցրութիւնը, երբեմն ալ՝ շատ դժնդակ օրերու դառնութիւնը: Իր երկինքին վերեւ տեսած է անկախութեան դրօշակին ծածանումը եւ անհետացումը: Այս- րան վերիվայրումներէն ետք, այս երկիրը 22 Նոյեմբերի մեծ օրուան մէջ գտած է իրագոր- ծումը իր յոյսերուն՝ ապրողներուն եւ մե- ռածներուն:

Անկախութեան իր պայքարին մէջ այս փոքր ժողովուրդը գտած է ինքնավստահու- թեան գաղտնիքը եւ ազգային միութեան գաղտնիքը:

Հաւատք եւ միութիւն: Ահաւասիկ այն եր- կու գէթերը, որոնց շնորհիւ ան պայքարե- ցաւ բաշարար եւ յաղթեց նոյնիսկ բիրտ ու- ժին:

Արժանիքներն ու առաքինութիւնները, որոնք կեանքի եւ ազատութեան արժանի կը դարձնեն մեզ, մեր անկախութեան արժանի կը չուամիս բոլոր գոյութեան իմաստները, յաջո- դութեան եւ իմացական ու մարդկային հարս- տացման մեր բոլոր կարելիութիւնները, այս բոլորը անգոր պիտի ըլլային եւ ապարդիւն, եթէ մեր ինքնավստահութիւնն ու խոր միու- թիւնը չըլլային հիմքեր մեր շինիչ աշխատան- քին:

Ուրեմն հաւատքին եւ միութեան այդ գորու- թեամբ է, որ մեր սիրելի հայրենիքը կրցաւ յաղթահարել վերջին տագնապը, որուն ըն- թացքին իր ամբողջականութիւնը պառակտու- մի վտանգին տակ էր, տնտեսութիւնը՝ փլուզ- ման եւ զաւակները՝ անհետացման:

Փորձութեան օրերը, որ վերջերս անցու- ցինք, մեզի սորվեցուցին, թէ մեր նակատա- գիրը գործն է մեր ձեռքերուն: Քիչ մնաց մեր ձեռքերովը փնացնելիք մեր անկախութիւնը եւ մեր սեփական ձեռքերովը փրկեցիքը գայն:

Չեմ կարծեր, թէ ժողովուրդ մը, որ պատ- մութեան մէջ արձանագրած է 1943ի անկա- խութեան հրաշագան իրագործումը եւ 1958ի հրաշագան վերականգնումը, սակեւ ետք հեռա- նայ ապահովութեան, կայունութեան, բարգա- ւաճման եւ միութեան նամբանքներն:

Լիբանանցիներ, Այս փառապանծ տարեդարձին առթիւ, երբ հաւատարմութեան եւ երախտագիտութեան պարտականութիւն մը զիս կը մղէ ոգեկոչելու յիշատակը մարտիրոսներու, որոնք իրենց կեանքը տուին այս երկրին, յարգանքս կը յայտնեմ նաեւ այս հայարտ ժողովուրդին, որ յարատեւութեան եւ միութեան առաքելու- թեամբ հասկցաւ անկախութիւնը. անձուեր դեկավարներուն, ողջ կամ մեռած, որոնք զինք յաղթանակի առաջնորդեցին. արար եղբայրա- կան պետութեանց եւ ժողովուրդներուն. բոլոր բարեկամ պետութեանց, որոնք մեր կողքին կեցան ազատագրութեան օրը, զոր կ'ոգեկո- չենք այսօր. բոլոր անոնց, որոնք հասկցան եւ նանցցան մեր դատը: Կը հաւատամ, թէ պարտքս է կոչ ուղղել նաեւ այս սիրելի երկրի զաւակներուն, Լիբանանի եւ արտասահմանի լիբանանցիներուն: Անոնցմէ կը խնդրեմ՝ ջնջել հետքեր մեր ապրած եղբարկան փորձութեան եւ բոլորս միասին՝ քաղաքացի եւ ղեկավար, պատասխանել Լիբանանի կոչին՝ մշտանո- րոգ ետանդով, իրագործմանը մէջ այն հիանա- յի առաքելութեան, որ մերն է արարական եր- կիններու, արեւելքի եւ համայն աշխարհի մէջ:

Նոր մեկնում մը ունենանք մեր առաքելու- թեան կատարման մէջ, մեր սիրտը հաւատքով ալուցուն՝ հանդէպ այս երկրի ներկային ու ապագային: Եւ բոլ Լիբանան ըլլայ բոլորին համար եւ բոլորը՝ Լիբանանին:

Կեցցէ Լիբանան:

Հարսանեկան Քարային Ընդհանուր Հարսանք

Հարսանքի Կերպար - Պ. Համուտ
Հեռ. 01-253008

ԱԶՔԸ ԼՈՅՍ ՈՐՏՈՐԳՆԵՐՈՒՆ
ARMURERIE BARKEV
(SAM SPORT)

SILMA (ITALY)

Beretta - Benelli - Winchester

Յարդոց յանախորդներուն կը ներկայացնէ վերջին նորոյի որտորական հրացաններու, փամփուշտներու և պիրոլիտներու ճիշտ հատարածով մատչելի գիններով

Ունենք նաեւ արտոնագիրներու և նորոգութեան յատուկ բաժին

Հասցէ.- Պոլսոյ Համուտ, «Արմուր» պողոտա
Հեռ. 01-261700, 03-666060

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԺԱԳ ՎԵՔԻԼԵԱՆԻ մահուան ժ. տարեկիցին եւ ՎԵՔԻԼԵԱՆ գերզատանի ԱՆՅԵՆՅԱՆՆԵՐՈՒՆ յիշատակի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Նոյեմբեր 2002, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԱԷ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ մահուան քառասունցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Նոյեմբեր 2002, Զատարի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցոյ մէջ, առաւելու ժամը 10:00ին:

ԱԲՐԱՀԱՄ ԶԵՅՅԵԱՆԻ մահուան քառասունցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Նոյեմբեր 2002, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՍԵՆԱԿ ՉՊԼԱԵԱՆԻ մահուան քառասունցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Նոյեմբեր 2002, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍՈՆԱ ՂԱԶԱՐԵԱՆԻ մահուան Գ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Նոյեմբեր 2002, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԲԵՏԼՊ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ մահուան Գ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Նոյեմբեր 2002, Գալատուրանի Ս. Աստուածածին եկեղեցոյ և Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցոյ մէջ յաւարտ Ս. պատարագի:

ՍՈՒՐԵՆ ԶՈՐՃԻԵԱՆԻ մահուան քառասունցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Նոյեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՄԵՆՈՒԿԻ ՆԵՐՈՊԵԱՆԻ մահուան Գ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Նոյեմբեր 2002, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱԶԲԱՆ ԹԻԻ 5306
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

| | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | |

| | |
|---|--|
| ՇՈՐԱԿԱՆԱԿԱՆ | ՈՒՂԱՆԱԿԱՆ |
| 1. Զուգակազմ, բազմադրանք: | 1. Ստուեր - Կարապետյան: |
| 2. Հայաստանի գեղարվեստ - Միսյան: | 2. Գաղթող թուրքեր - Արակյան օտար անուն: |
| 3. Հերկ - Այգլու: | 3. Անտառաբոր - Մանր որդ: |
| 4. Քանկուրու - Կեցիլ (Հակ.): | 4. Կրկին - Եւրոպական գեան: |
| 5. Արական անուն - Կողմ: | 5. Ողջակէզ - Արական օտար անուն: |
| 6. Լծորդութիւն - Կողմ: | 6. Անձնական գերանուն - Բազմ: |
| 7. Ազգուրկ: | 7. Օգնական: |
| 8. Պայթեան մայրաքաղաք - Բազմութիւն: | 8. Հին Կտակարանի գիրքերէն - Կենդանական անդանդութիւն: |
| 9. Ճոկան - Լ.Օ. Նաչի մասնակցութիւն: | 9. Նաչ - Իրական «նա»: |
| 10. Նիւթեղէն գոյացութիւն - Ֆրանսական գետ: | 10. Միջուկը զօռարելլու - Որ: |

ԹԻԻ 5305
ԽԱԶԲԱՆԻ
ԼՈՒԾՈՒՄԸ

| | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լ | Ս | Ս | Ե | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 2 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 3 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 4 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 5 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 6 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 7 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 8 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 9 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 10 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |

ՍԱԿԱՐԱՆ

Պէջրութի սակարանին մէջ օտար դրամանշներու փակման սակագիններ հետեւեալներն էին երէկ.

| | | |
|-------------------------|-------------------|------|
| Սուրիական թղթակի | 32,59 - 32,59 | լ.ն. |
| Իրաքեան տինար | 4861,34 - 4861,34 | լ.ն. |
| Քուեյթեան տինար | 5001,66 - 5000,00 | լ.ն. |
| Յորդանանեան տինար | 2124,44 - 2124,44 | լ.ն. |
| Պահլէյեան տինար | 3998,67 - 3998,67 | լ.ն. |
| Ս.Մ.Էմիրութեան տինար | 410,43 - 410,43 | լ.ն. |
| Քաթարեան դիալ | 414,07 - 413,05 | լ.ն. |
| Սեուտական դիալ | 401,99 - 401,97 | լ.ն. |
| Օմանեան դիալ | 3915,58 - 3915,58 | լ.ն. |
| Եգիպտական կինէ | 325,42 - 325,40 | լ.ն. |
| Անգլիական սթըրլին | 2380,49 - 2371,00 | լ.ն. |
| Զուիցերիական ֆրանք | 1029,01 - 1028,45 | լ.ն. |
| Թրքական լիրա (100հապար) | 94,45 - 95,20 | լ.ն. |
| Կիպրական փաունտ | 2642,20 - 2641,29 | լ.ն. |
| Ճապոնական հապար եէն | 12,31 - 12,30 | լ.ն. |
| Ամերիկեան հապար ֆրանք | 3,31 - 2,31 | լ.ն. |
| Ամերիկեան տոլար | 1507,50 - 1507,50 | լ.ն. |
| Քանադական տոլար | 952,50 - 951,46 | լ.ն. |
| Աւստրալիական տոլար | 841,79 - 842,84 | լ.ն. |
| Եւրո | 1510,67 - 1509,01 | լ.ն. |

● **ՈՍԿԻ**
Անգլիական մէկ ոսկի 115,000 - 115,000 Լ.Ն.
Իրանեան մէկ ոսկի 108,500 - 108,500 Լ.Ն.
Օմանեան մէկ ոսկի 95,500 - 95,500 Լ.Ն.
Մեքսիկական փետոս 569,500 - 589,500 Լ.Ն.
Մէկ քրիոկրամ 15,000,000 - 15,500,000 Լ.Ն.
Մէկ օսն ոսկի 320,55 - 319,45 \$
Մէկ օսն արծաթ 4,54 - 4,55 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
Եւրո 1.0012
Քանադական տոլար 1.5842
Զուիցերիական ֆրանք 1.4654
Ճապոնական եէն 122.51
Մէկ սթըրլին 1.573
Մէկ տոլար 582.5 դրամ

● **ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ**
Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում
Ա. կարգ 4 7/8 4 6/8
Բ. կարգ - - -

★ **Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ** ★

★ **ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)**
Բոլոր ու երբայր հաւանաբար հարցեր ունենաք այսօր, եւ նախանձի մէկը միւսին յաջողութեան: Այսուհանդերձ ներդրեան մը պարագային պիտի մոռցուին երկպառակութիւնները, եւ դուք պիտի օգուտը իրարու: Այսօր այսպէս է ձեր պարագան:

★ **ՅՈՒՂ (21 Ապրիլին 21 Մայիս)**
Բախտախաղի սեղանին մէջ գումարներ մի գնէք, որովհետեւ այսօր բախտը ձերին հետ պիտի չըլլայ: Ըսենք նաեւ, որ պետք է հեռու կենաք նման մոլորութիւններէ:

★ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)**
Մարդիկ պիտի շնորհաւորեն ձեզ՝ ձեր բնածին ուրախ արամադրութեան եւ լուստեսութեան համար: Զանազէք միշտ կենսաբան լուս կողմերուն նայիլ եւ ուրախանալ:

★ **ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)**
Ձեր հարազատները պիտի գանգատին, քէ իրենց հետ հարգողակցութեան մէջ չէք մտնել: Դուք անտրամադիր ըլլալով՝ պիտի մնաք մեկուսի: Սակայն հարկ է, որ հանդիպիք ձեր հարազատներուն եւ խօսակցիք:

★ **ԱՌԻԻԾ (24 Յուլիսին 23 Օգոստոս)**
Ձեր մտքին մէջ տարօրինակ մտածումներ կան, անօգուտ հարցեր, ահա քէ ինչու հարկ է մտնել ընկերութեան մէջ: Երբ ուրիշներուն ցանկեր տեսնէք, ձեր բեթեւ հոգեքը կը մտնաք: Ինքնավստահ եղէք:

★ **ԿՈՅ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)**
Նրէ անգործ էք, այսօր պիտի գտնէք աշխատանք մը, բայց ճիշդ ձեր փափաքած գործը չէ: Մի՛ յուսահատիք, մ'օտ օրէն պիտի ունենաք ձեր ուզածը ու շատ պիտի ուրախանաք:

★ **ԿՇԻՈՒՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)**
Նրէ այսօր իմանաք ձեր վերաբերել աղուոր լուր մը, շատ պիտի ուրախանաք եւ հանգիստ բուն մը պիտի բնանաք: Օրը բարի է:

★ **ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)**
Պիտի տաք կարեւոր որոշում մը, որ պիտի ազդէ ձեր ապագային վրայ: Իսկ հարցը կը ռազմապետը: Երբ ձեր երկար տեսնէ ի վեր. այսօր պիտի քորափէք զայն ձեր միտքէն:

★ **ԱՂԵՂՆԱՌՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)**
Ձեր տարեդարձ մտնեցած է եւ ոչ մէկը կը հարցը: Երբ նաշակին համեմատ նուրբ մը ընծայելու մասին: Այս պարագան անուղղակի կերպով հասկցուրէք ձեր շրջապատին:

★ **ԱՅԾԵՂԻՔԻՆ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)**
Երբեմն անտարբեր կը մնաք ձեր ընտանի անասուններուն նկատմամբ, ետքն ալ կը զոջաք: Այսօր անտարբերութեամբ մի՛ նստիք որեւէ հարց լուծելու համար:

★ **ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար)**
Բարեկամ մը ձեզ պիտի հրաւիրէ երբայր քատրոն մը. որուն մասին բնաւ չէիք մտածած: Աղուոր առաջարկ է, կարելի չէ մերժել:

★ **ԶՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)**
Ձեր ընտանիքը հակառակ է տունէն ուրիշ վայր փոխադրուելու կամ տեղափոխուելու ձեր ծրագիրին, իսկ դուք բնաւ մտիկ չէք ընել անոնց խրատը: Ինքնագլուխ որոշում մի՛ տար:

ՕՐԱՏԵՐ
ՓԼԱՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՒ / ԵՐԳԱՀԱՆԴԵՍ

ՄԱՅՔԸԼ ՀԻԼ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ ՊԼՈՒԶԻ ԵՐԵԿՈՆԵՐ

Այս շաբաթավերջին «Սրբաբա»ի մէջ պիտի երաժշտութեան էլիտներ կ'ունենայ այս ժանրի երգարուեստի մէջ մասնաւոր Միացեալ Նահանգներու տարածքին հռչակ ապահոված Մայքըլ Հիլ: 1996ին ի վեր, երբ անոր «Պիլոյ մուս» խումբը դարձաւ մրցանակակիր, Մայքըլ Հիլ կը նկատուի առանցքներէն մէկը սեւամորթ ամերիկացի երիտասարդ արեւտագէտներուն այն խումբին, որ կը շարունակէ իր արուեստը նոյնի պիտի երաժշտական ոճի կարգազման:

Իր երգերուն մեծ մասը առանձին կամ ընկերակի գրած Մայքըլ Հիլի համար երգեր գրելը նոյնքան կարեւոր է, որքան կիրառելու գործը: «Պիլոյ մուս» պիտի երաժշտութեան մուտքները կը պատմէ: Կիրառի նուազը եւ երաժշտութեան կամ երգին, ըսած է նա: Անոր գրած երգերը կը կերտուան ընկերակի նիւթերու վրայ եւ նորարարութեան կողմէն, կը ցոյցարեն նախապատկառելի տարիներ:

Փոլ կիրակոսեանի նուիրուած ցուցանակէսի բացում. երկուշաբթի ժամը 6:00ին, «Եւրոպոս» ցուցարանին մէջ:

19:00.- Երգարուեստ. Մայքըլ Հիլ (պիլոյ), երկուշաբթի ժամը 7:30ին, Փայլաման համալսարանին մէջ:

Ներգրական շաբաթականի փառասուն. կը երկարապարհ է. Ֆիլիպին «Երբ է աւտար» ժապաւեռը, երկուշաբթի ժամը 7:30ին, «Սոֆի»ի մէջ:

Նուագանակ. Լիբանանի սիմֆոնիք նուագախումբի ելույթ՝ ղեկավարութեամբ Վոնչէ Զեֆէի, երկուշաբթի ժամը 8:30ին, Աճ Բողէֆ եկեղեցոյ մէջ:

Ցուցանակ. «Տը սփէշըլ սիգնի կրիթիկ ֆէյթ»՝ Նալպանտեան ցուցարանին մէջ:

Հայ գիրքի 24րդ ցուցանակ-գեղջ վաճառ, Մեծի Տանն կիլիկիոյ կարգիկոսարանի «Կիլիկիա» բանգարանին սրահին մէջ, մինչեւ 24 Նոյեմբեր. առաւօտեան ժամը 10:00էն երկուշաբթի ժամը 7:00:

ՀԵՌԱՏԵՍԻԼ

| | |
|---|--|
| 12:30.- Գեղարուեստ. Ֆիլմաշար 19:00.- Արաբերէն լուրեր 20:30.- Ռուսումնասիրութիւն 20:35.- Տրիան ու մարտ 21:30.- Երգարուեստ. ժապաւեւն | 13:05.- Աղուոր (դասական երաժշտութիւն) 13:25.- Երկնքի երեք հոյակապ ընկաւ 13:35.- Թիթմի պիլոյ 13:55.- Նորատետր 14:00.- Լուր 14:05.- Երաժշտական ալիք |
| 12:30.- Դանիիլ Դանիլի 13:00.- Մարտի հանա 14:00.- Եւրոպայի 14:30.- Լուրեր 15:00.- Սրբուար 17:00.- Ֆիլմաշար 18:30.- Ազգային կոմպոզիտորներ 19:30.- Միւս. լուրեր 20:00.- Ամերիկեան Ֆիլմաշար | 15:00.- Լուրեր 16:00.- Մուլիսաար մուֆիտ 17:30.- Ռամատան ուսուցիչ 18:30.- Սինեմա/35 mm 19:00.- Լուրեր 20:00.- Պուրա, իրքիստ, թաքս |
| 11:00.- Մարտի 13:00.- Ֆիլմաշար 13:05.- Ֆիլմաշար 14:00.- Արաբական լուրեր 15:00.- Լուրեր 15:15.- Թիթմի 16:45.- Պիլ Կէյթ 17:30.- Մըն ԵՍԼԵ 18:30.- Հնումի մատուցի 19:44.- Լորո 20:00.- Արաբերէն լուրեր 20:30.- Պատար ուսուցիչ 21:30.- Քէյթմ էլ Նէս 00:00.- Երգարուեստ. ժապաւեւն | 15:00.- Հայուր 15:20.- «Արեւիկ» 16:00.- Հեռուստատեսիայ «Սիրոյ կախարհանք» 17:00.- Երեկոյեան երեան 17:20.- Տեսաֆիլմ «Ռիստագնացութիւն ղէպի Ջաւախք» 18:00.- Սլոյր 18:10.- Սնցալը ներկան է 18:35.- Տուն-տունիկ 19:00.- Հայուր 20:00.- Բոհեմ 20:35.- Հայեր 21:00.- Ռուսիքոն+ 22:00.- Հայուր 22:20.- Կենդանական ձայնագրութիւն 23:20.- Հայուր (ռուսերէն) |
| 11:00.- Մարտի 13:00.- Ֆիլմաշար 13:05.- Ֆիլմաշար 14:00.- Արաբական լուրեր 15:00.- Լուրեր 15:30.- 2Էմէն այուսակ 16:30.- Իֆթար 17:30.- Արաբական Ֆիլմաշար | 13:30.- Տեղական Ֆիլմաշար 14:30.- Լուրեր 15:00.- Վաւերագրական 16:30.- Մարտի Լուր 17:00.- Վարդիկ ին մայ պետ 18:00.- Աղու Սէլիմ 19:30.- Խաղեր 20:30.- Սաղմ 21:30.- «Լայֆ լայֆ» 23:30.- Լայլի պրոյեկտ |

ԱԶԳԱԿ 50 ՏԵՄԵՐԻ ԱՊՐԵՆՁ
21 Նոյ. 1952

ԵԳԻՊՏՈՍԻ ԸԱՅ ԳԱՐՈՒԹԻՆ ՓԱՌԱՌՈՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՆԸ ԸՆԴԱՆՈՒՐ ԸՐԱՄԱՆԱՏԱՐ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ԼԵՒԱ ՆԵԿԻՊԻ ԶՕՐԱՎԱՐԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ «ՅՈՒՍԱԲԵՐ»Ի ՏՈՒՆԸ ՈՒ ԳՐԱԴՈՐ ՄԱՂԹԱՆՔԸ

Կիրակի, Նոյեմբեր 16, պատմական բուրակին մը, փառասուն մը եղաւ եգիպտոսի հայոց պատմութեան մէջ:

Վարչապետ ԳՕՐ. Մոհամէտ Նեկիպ իր նետերով յայտնեց Գաբիթի հայոց ուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ առաջնորդ սրբազանը, բանաստեղծ Պարազան, Ազգային իշխանութեան անդամներ, ազգային վարժարաններու աշակերտներն իստուր թագաւորին մը կը սպասէ վարչապետի ժամանումին: Զօրավար իր նետերով յայտնեց հասաւ եկեղեցի եւ տաք էր յայտնեց եկեղեցի մնալը, բարձրացաւ առաջնորդարանի դահլիճը, ուր տեղի ունեցաւ գեղեցիկ ընդունելութիւն:

Իսկ Կիրակի իրիկուն, ժամը 6:30ին, ԳՕՐ. Մոհամէտ Նեկիպ, գինուորական եւ քաղաքական նետերով յայտնեց թագաւորութեան մը ժամանեց «Յուսաբեր»-ի Տունը: Հագարներուն հասնող թագաւորին մը իստուր էր «Յուսաբեր»-ի շէնքին առջեւի հրապարակը, ուր ինչպէս ժամանաւորութիւններով եւ կեցցեկներով զինուորական վարչապետը:

Համերգը սկսաւ եգիպտական քայլերգով: Անմիջապէս գործարաններու յայտարարի ղեկավարութեան մասը, երգուցանեց եգիպտացի համալսարանի ընթացիկ Վահագի «Նախու էլ Հուրիդա» (Ազատութեան քայլերգ): Հեղինակը, որ հրապարակեց իր նետերը, զինուորական եւ քաղաքական նետերով յայտնեց թագաւորութեան մը ժամանեց «Յուսաբեր»-ի Տունը: Հագարներուն հասնող թագաւորին մը իստուր էր «Յուսաբեր»-ի շէնքին առջեւի հրապարակը, ուր ինչպէս ժամանաւորութեան մասը, երգուցանեց եգիպտացի համալսարանի ընթացիկ Վահագի «Նախու էլ Հուրիդա» (Ազատութեան քայլերգ): Հեղինակը, որ հրապարակեց իր նետերը, զինուորական եւ քաղաքական նետերով յայտնեց թագաւորութեան մը ժամանեց «Յուսաբեր»-ի Տունը: Հագարներուն հասնող

ԵԹԵ ՍՍՏՍՍ ՅԻՒՄԵՅՆ ԶԵՆՈՒՐԿՈՒԻ

ՊՈՒՇ ՊԻՏԻ ՊԱՀԱՆՁԷ ՕԹԱՆԻ ԳԱՇՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ՕԹԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՊԱԶԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱՔԸ

Այն պահուն, երբ հրաք կը խոստանար գործակցիլ ՄԱԿի հետ... Գլխաքի ընկե- ռակցող Սոհամէտ Պարատի եւս հաստա- տացած է գործակցիլ: Պլիքս աւելցուց, որ եր- վորեալ այցելութիւնը շինիչ էր ու արդիւնա- էտ:

Միացալ Նահանգ- ներ կը պնդեն, որ ՄԱ- ՌՕՍԻի դաշնակիցներուն օժանդակու- թիւնը պիտի պահան- ջէ՝ ապապիւնելու հա- մար Սատտան Հիւսէյ- նը, եթէ ան մերժէ փճացնել հաւաքական քանդումի վէճերը ու պահեստը, որ ըստ Ուաշինկթընի, տակա- լին գոյութիւն ունի:

Ֆլայշըր ըսաւ, որ Ուաշինկթըն դիմած է նաեւ Ֆրանսայի, որ- պէսպիսի ֆրանսական ուժերուն մասնակցու- թիւնն ալ ապահովէ: Միւս կողմէ, ռուս բարձրաստիճան պաշ- տօնատարներ երէկ ըսին, որ ՄԱԿի քննիչ- ներուն վերադարձը արտօնելով՝ հրաք ինքզինք փրկեց պա- տերպապէ մը: Արտա- քին գործոց նախա- ըրար Իկոր Իվանով ըսաւ, թէ հրաք կեց- տածքը ճամբան կը հարթէ խաղաղ լուծու- մի մը դիմաց: Պաշտ- պանութիւնը վրայ չի նախատեսուիլ հրա- քի դէմ պիտուողական գործողութիւն մը, որովհետեւ Պաղտատ որոշած է գործակցիլ:

Պուշ, որ կը խօսէր չէիս նախագահ վազ- լաւ Հաւէլի հետ կա- տարած մամլոյ միաց- եալ ասուլիսի մը պա- հուն, ըսաւ, որ ՕԹՍ- Նի անդամները իրենց վեհաժողովին պիտի քննարկեն կա- ռելիութիւնները որ- դէգրուելիք միջոցա- ռումներուն, եթէ հրաք մերժէ ենթար- կուիլ ՄԱԿի պահանջ- ներուն: Պուշ աւել- յցուց, որ եթէ հրաքի դէմ պիտուողական գործողութեան մը որոշումը տրուի, Ուա- շինկթըն պիտի խորհրդակցի իր բարե- կամներուն հետ՝ մաղ- թելով, որ անոնք միա- նան ամերիկացիներուն:

Միւս կողմէ, ՆԱ- ՀԱԳՆԵՐՈՒՄ պաշտ- պանութեան նախա- ըրար Տոնըլտ Ռամա- ֆէյլտ քննադատեց ՄԱԿի ընդհանուր քա- ռուղար Քոֆի Անանը, որ ըսած էր, թէ «ար- գիլեալ գօտիներ»ուն մէջ ամերիկեան ու բրի- տանական օդանա- յերուն դէմ գործուած արարքները թիւ 1441 որոշումի խախտում չեն նկատուիլ եւ հետե- լաբար պատերապմ յայտարարելու համար իբրեւ պատրուակ չեն կրնար օգտագործուիլ:

Սպիտակ Տան քան- թեր Արի Ֆլայշըր երէկ հաստատեց, որ Ուա- շինկթըն կը խորհրդ- դակցի մէկէ աւելի դաշնակիցի հետ, որ- պէսպիսի արտաքին վո- ռակցութիւն եւ մաս- նակցութիւն հրաքի դէմ գործողութեան մը: Բրիտանիա հաս- տատեց, որ Ուաշինկ- թըն բրիտանական ու- ժերու մասնակցու- թիւնը խնդրած է հրա- քի դէմ պիտուողական գործողութեան մը: Պաշտպանութեան նախարար ձեք Հու ըսաւ, որ Բրիտանիա պատրաստ է մաս- նակցութիւն բերելու: Հու շեշտեց սակայն, որ ասիկա չի նշանա- կեր, թէ հրաքի դէմ պատերապմը անխու- սափելի է: Կը նախա- տեսուի, որ Միացեալ Նահանգներու գլխա- ըրար դաշնակիցը նկա- տուող Բրիտանիա 15 հապար պիտուորով մասնակցի գործողու- թեան:

ԱՇԽԱՏԱԻՐՈՐԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԴԵԿԱԿԱՐԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԽԱՂԱՔԱՐՏԻ ԿԸ ՎԵՐԱԾԷ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Իսրայէլի Աշխատուորական Կուսակցութեան նոր ղեկավարը՝ Ամրամ Միցնա, որ դիրտութեամբ պարտութեան մատնած էր իր գլխաւոր մրցակիցը՝ Պենիամին Պրն Էլիազարը, նոյնքան դիրքին պայքար մը պիտի չունենայ, Լիքուտի թեկնածուն պարտութեան մատնելու համար Յունուարի ընտրութիւններուն:

Աշխատուորական Կուսակցութեան անդամնե- ըր Երկուշաբթի օր նոր ղեկավար ընտրած էին Հայֆայի քաղաքապետ եւ նախկին զօրավար Միցնան, որ խոստացած է քանդել պաղեստինե- յան հողերու վրայ կառուցուած հրէական բնա- կեցման վայրերը, եթէ վարչապետ ընտրուի Յուն- լարին: Միցնայի ընտրութեամբ՝ Աշխատուորա- կան Կուսակցութիւնը կ'ուղղուի դէպի խաղաղու- թեան գործընթացին վերականգնումը պահանջող ճակարտ: Քաղաքական մեկնաբանները դիտել կու տան սակայն, որ ներկայիս, իսրայէլացի քուէար- կողք թեքած է դէպի աջ եւ խանդավառ չէ չափա- կանց չափաւորական ու մեղմ տեսակետներով: Ըստ մեկնաբաններու, իսրայէլացի քուէարկողը կը նախընտրէ կարծի քաղաքականութիւնը պա- ղեստինցիներուն դէմ՝ վերջ տալու համար յար- ձակումներուն եւ անձնասպանական գործողու- թիւններուն: Հարցախոյզներու արդիւնքներուն համաձայն, ո'վ ալ ըլլայ աշխատուորական ղե- կավարը, անիկա պիտի չկարենայ պարտութեան մատնել Լիքուտի թեկնածուն, որ շատ հաւանա- բար պիտի մնայ վարչապետ Արիէլ Շարոնը:

Միցնա, որ նորընտել մը կը նկատուի քաղաքա- կան ասպարէզին մէջ, երդուած է մօրուքը չածի- լել մինչեւ որ խաղաղութիւնը հաստատուի: Մից- նա կը յուսայ, որ պիտի կարենայ համոզել իսրա- յէլացի քուէարկողները, որպէսզի տեսնեն տար-

բերութիւնը չափաւորական եւ արմատական տե- սակէտներուն միջեւ եւ իրենց քուէները տան ի նպաստ խաղաղութեան: Միցնա ըսաւ, որ իսրա- յէլացիք պէտք է բաժնուին պաղեստինցիներէն: Ան աւելցուց, որ այդ բաժանումը պէտք է իրա- վանանայ կամ երկկողմանի համաձայնութեամբ մը կամ՝ իսրայէլեան միակողմանի որոշումով մը: «Եթէ վարչապետ ընտրուիմ, մէկ տարիէն պի- տի պարպեմ կազմի բնակեցման վայրերը», յայ- տարարեց Միցնա: Կազմի մէկ միջուկ պաղես- տինցիներուն կողքին կ'ապրին եօթը հազար հրէաներ: Միցնա ըսաւ նաեւ, որ ինք ապա- վերակի բանակցութիւններու պաղեստինցի այն ղեկավարներուն հետ, որոնց հետ կը մերժէ տե- սակցութիւն ունենայ Շարոն՝ Աշխատուորական Կուսակցութեան խաղաղարարի դերակատարու- թիւնը վերահաստատելով:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եա- սէր Արաֆատ ըսաւ, որ եթէ Միցնա հետեւի նախ- կին վարչապետ Իցիաթ Ռապիհի օրինակին՝ պա- ղեստինցիները իրենց ձեռքերը պիտի երկարեն գործակցելու համար Իսրայէլի նոր ղեկավարու- թեան հետ: Համաւ եւ Իսլամական ժիհաւտ շար- ժումները սակայն յայտարարեցին, որ մեծ տար- ընութիւն մը չեն տեսներ Աշխատուորական Կուսակցութեան եւ Լիքուտի միջեւ: Իսլամական շարժումները որոշած են շարունակել պիտեալ պայքարը մինչեւ որ Իսրայէլ վերջ տայ պաղես- տինեան հողերու գրաւման:

Պաղեստինցի պաշտօնատարներ առ հասա- րակ մտահոգ են Յունուար 28ի ընտրութիւննե- ըրուն արդիւնքներուն մասին կատարուող նախա- տեսութիւններով, ըստ որոնց, աջակողմեաննե- ըրուն պիտի ըլլայ յաղթանակը: Պաղեստինցի ղե- կավարներ մտահոգ են, որովհետեւ պաղեստին- կան շրջաններուն դէմ պիտուողական շատ աւե- լի կարծի ու բիրտ միջոցառումներ կրնան որ- դէգրուիլ: Պաղեստինեան խորհրդարանի նախա- գահ Սիմէտ Քոբէյ ըսաւ, որ եթէ Միցնա յաջողի պարտութեան մատնել Լիքուտի թեկնածուն, հա- լանաբար կարելի պիտի ըլլայ մէկ տարիէն իս- ղաղութեան համաձայնագիր մը ստորագրել:

Մինչ այդ, իսրայէլեան ուժերը կը շարունակեն գործողութիւնները պաղեստինեան շրջաննե- ըրուն մէջ: Թուրքարմի մէջ, իսրայէլեան ուժեր երեքշաբթի գիշեր սպաննեցին ծայրայեղական պաղեստինցի մը եւ չորս անցորդներ, յայտնեցին սկանաւտներ: Իսրայէլեան բանակը հաստա- տեց սպանութիւնը Թարբէ Զաղայի, որ անդամ է «Արաբի Նահատակներու Փաղանգներ»ուն: Իս- ղրայէլեան աղբիւրներու համաձայն, Զաղայ ծրագրած է անձնասպանական գործողութիւն- ներ: Պաղեստինցի սկանաւտներ սակայն ըսին, որ պիտուորներ բախում ունեցած են Զա- ղայի պիսակցիներուն հետ, եւ թէ բախումին ըն- թացքին ինկած պիտեալ կարգին է 13 տարեկան պատանի մը: Վիրտուրուած են նաեւ 15 պաղես- տինցիներ: Արաֆատ դատապարտեց գործողու- թիւնը՝ դիտել տալով, որ անիկա «շարժ» է: Կազմի մէջ ալ, իսրայէլեան ուժեր սպաննե- ցին երկու պաղեստինցիներ, որոնք կը փորձէին բնակեցման վայր մը թափանցել:

(ՌՈՅԹԸՐԸ)

«ՔՍԻՏԱՍ»Ի ՀԵՏ ԿԱՊԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ 3ԱՆՑԱՆՔՈՎ

ԱՒԵԼԻ ՔԱՆ 100 ՍԵՈՒՏՅԻՆԵՐ ԿԸ ՄՆԱՆ ԱՐԳԵԼԱՓՎԱՌՄԾ

ՌԻԱՍ, 20 (ՌՈՅԹԸՐԸ).- Մեկուտական Արա- բիոյ ներքին գործոց նախարար Նայէֆ իշխա- նը յայտնած է, թէ երկրին մէջ արգելափակուած են աւելի քան 100 սեփուցի քաղաքացիներ՝ «Քայիտա» ցանցին հետ կապեր ունենալու կասկածներով:

«Ըքթիստիս» թերթը Չորեքշաբթի օր հա- ղորդած է նշեալ տեղեկութիւնը, աւելցնելով, որ անոնք Աֆղանիստանէն վերադարձած են:

Մ. Նահանգներու մէջ 11 Սեպտեմբեր 2001ի յարձակումներէն ետք, առաջին անգամ ըլլա- լով էր, որ պաշտօնապէս թիւ մը կը տրուէր երկ- րին մէջ ահաբեկչութեան յանցանքներով ձեռ- բակալեալներու մասին:

«Այդ գծով հարցաքննութիւններուն թիւը շուրջ 700 սեփուցի է», ըսած է ան, հերքելով, թէ այդ թիւը շատ աւելի բարձր էր:

Մեկուտական ապահովութեան աղբիւրներ երկուշաբթի օր յայտնած են, թէ իշխանութիւն- ները ահաբեկչութեան յանցանքով քաղաքացի մը ձերբակալած են՝ անոր վրայ կրակելէ եւ վայն վիրաւորելէ ետք: Ըստ սեփուցի պաշտօնատարներու, տաս- նեակներով սեփուցիներ կը գտնուին Կուաե- թանմոյի ամերիկեան խարխիւին մէջ արգե- լափակուած «Քայիտա»ի անդամներուն եւ թա- լեպան բանտարկեալներուն միջեւ:

Ուաշինկթընի եւրո- պացի դաշնակիցները խանդավառ չեն հրա- քի դէմ պիտուողական գործողութեան մը ծրագրելով: Անոնք մտահոգութիւնները փարատելու համար, Պուշ յոյս յայտնեց, որ հրաք ամբողջական գործակցութիւն ցու- ցաբեր է ոչինչ պա- հի քննիչներէն, որ- պէսպիսի պիտուողական ընտրանքը նկատի չառնուի:

galerie PIERROT Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans Pour ses enfants on rêve toujours de ce qu'on n'a pas eu PIERROT réalisera tous vos rêves. Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ՉԱՍՏ. - MAISON GABY Տնային Ելեկտրական Առարկաներ - Home Appliances Նոր Տարուան Բացառիկ Գիներ - Christmas Offers

| | | |
|---|-------------------------|---|
| Gaz Heater Italy 113000LL | STEREO 197000LL | Microwaves 90000LL / 110000LL |
| LEIFHEIT 60000LL | DVD-JG 185000LL | TOSHIBA Panasonic SAMSUNG SANYO LG White-Westinghouse |
| BRAUN magimix KENWOOD LEIFHEIT TEFAL/ASEB FAGOR | Braun Silk-épil 50000LL | Vacuum Cleaner Japan 113000LL |
| Food Processor England 106000LL | | |

Պուրճ Զամուտ, մայր պողոտայ, դեղարան Արաքսի դիմաց, Զեռ. 01/261630

Casa del Sol SUPER DELUXE ՅԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐ Գեղատեսիլ ծովափայտեց դիրք Ժլէլ-Տիպի մէջ լաւագոյն վայր, հանդարտ մթնոլորտ

- 3 կամ 2 մնջասնեակ, հիւրասնեակ, ձաշասնեակ, կահաւորուած խոհանոց ջրհոր, ժմերաթոր, 2 կառատուն
- Մարմարապատ սալայատակ

Մանրամասնութեան համար դիմել, Սեպուհ եւ Զահե Սարգիսեան: Ըռ. 03-261 789 եւ 03-209051 թիւերուն

Bon Marché Rideaux (Accessoires, Couture et Installations) Couvertures - Draps de Lit - Serviettes - Eponges - Nappes de table et un Grand choix de Linge de maison Uniformes pour medecins et infirmières Robes de bonnes Place de la Municipalité de Bourj Hammoud Rue de la Muncipalite N°31 - Tel: (01) 257266

PHOTO NERSES ԱՐԿ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱԿԱՌՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ Չոր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէ ծոց հասած ԱՐԿԱԿԱՆ DIGITAL մեքենայի միջոցով, որակաւոր եւ զանազան չափերով Ստանձնում՝ 20 վայրկեանէն: Լուսանկարները կ'արձանագրենք CDի եւ կամ FLOPPY տիքետներու վրայ: Cameraներու ճոխ հաւաքածոյ ալկամներ եւ նկարի շրջանակներու ընտիր տեսակաթի: Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով: Պուրճ Ըամուտ, Զաղաքապետարանի փողոց, «Սանքըր Արիմ»ի դիմաց, Ըռ. 01-261858 եւ 01-255992